

17270

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ



ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԳԻՒԼԱՏՆԱՏ, ՈՒ ՆԱԽԱԿՐԹ, ՈՒՍՄԱՆՑ
ՅԱՆՁՆԱԽՄԲԻ



1909

Տպ. գ. և շ. ՏԵՐ.ՆՈՐԱԷՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

37

Կ-67

С арм-и
5990

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ

37

Կ-67

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԻՒԼԱՏՆԱՏ, ՈՒ ՆԱԽԱԿՐԹ, ՈՒՍՄԱՆՑ
ՅԱՆՁՆԱԽՄԲԻ

4/17 Յուլիս, 1909



2001

Յուլ. վ. եւ Հ. ՏԵՐ.ՆԵՐՍԷՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Ազնուաշոբ Ասեմայեհ Էմենի

Պատուարժան Տնօրէն Ժողովոյ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

Յանձնաժողովս պատիւ ունի Պատ. Ժողովոյդ ներկայացնել Միաց. Ընկերութեանց վարժարաններուն ծրագիրը, և հարկ կը համարի, ընդ նմին, համառօտիւ բացատրել այն տեսակէտները որոնք աշխատող եղած են իրեն՝ յիշեալ ծրագրին կազմութեանը վէջ:

1⁰. Նկատի ունենալով որ դաւառացի տղան՝ զանազան հարկեցուցիչ պատճառներու բերմամբ, յաճախակի բացակայութիւններ կ'ունենայ վարժարանէն, առաջին չորս տարեշրջաններուն համար 8 ական ամիս, և վերջին երկու տարեշրջաններուն համար 7 ական ամիս ուսմանց ընթացք ընդունեցինք:

Ըստ այսմ, կը յուսանք թէ ուսմանց վեց տարեշրջաններուն մէջ, աշակերտը ազատօրէն պիտի կատարէ ընդ ամէնը առ նուազն 46 ամսուան ընթացք մը:

Եւ որովհետեւ 7 տարեկան հասակին պիտի ընդունուի մանուկը վարժարան, ուստի առ նուազն 13 տարեկանին, չըջանաւարտ, պիտի մեկնի, ստանա՞ծ ըլլալով նախակրթական ու զիւղատնտեսաւ

49826-աի



36390-66

կան ուսմանց անհրաժեշտ տարերքը որոնցմով պիտի կրնայ Դիւղատնտեսական մասնաւոր Դասընթացքի մը հետեւիլ, կամ ընդունուիլ ուրիշ բարձր կարգի վարժարան մը, և կամ իր ծնողաց աշխատութեանը մասնակցիլ բանիմաց եղանակաւ :

2⁰. Պարտաւորուած ըլլալով, իրականին մէջ, դրելթէ քառամեայ վարժարանական աշխատութեամբ ամբողջովին աւանդել վեց տարիի վրայ բաժնուած նախակրթական ուսումը, վարժարանին համար տրամադրելի եղած ժամանակին տեւողութեանը հետ համեմատական պահեցինք աւանդելի ուսմանց սահմանը :

3⁰. Յանձնաժողովիս գլխաւոր հայեցակէտը եղաւ ուսմանց այնպիսի ծրագիր մը կազմել որ տղայոց ամբողջական զարգացումը երաշխաւորելով հանդերձ, հողագործական փափազը արծարծէ անոնց մէջ և լուսամիտ գիւղատնտեսութեան մը համար հարկ եղած գիտելիքն հայթայթէ իրենց :

Այս կերպով, գրքի չոր ու ցամաք թմրեցուցիչ ուսուցումը չէ որ մեքենաբար պիտի կատարուի հնաւանդ եղանակաւ, այլ օգուտ պիտի քաղուի աղուն գործունէութեան ու հետաքրքրութեան ընդածին բնազդներէն. անկիա շատ անգամ պիտի առաջնորդուի իր դասը առնելու պարտեզին կամ դաշտին մէջ, հողը, բոյսը, կենդանին գիտելով, և անձամբ կատարելով հողագործական աշխատութիւններ որոնց պիտի սիրէ լծուիլ նոյն

իսկ իր մատաղ հասակէն իբր էական պայման իր և իրեններու գոյութեան ու ապագայ բարեկեցութեան :

Ընդգրկած ըլլալու համար բնութիւնն իր ամէնէն գլխաւոր գիծերուն մէջ, Յանձնաժողովս ուսմանց ծրագրին մէջ կարեւոր բաժին մը տուած է նաև Մարդուն ու Անոր գործերուն. հետեւաբար, տղան պիտի սորվի, նոյնպէս իրազնական եղանակաւ, ինչ որ իրեն հայրենակից ու ազգակից մարդիկ գործած են ու կը գործեն Բնութեան արտադրութիւնները բազմապատկելու, բարուքելու և մարդկային Ընկերութիւնն ու կենցաղը կանոնաւորելու, ազնուացնելու համար :

Պիտի այցելէ վանքերու, դպրոցներու, պաշտօնատուններու և Դիւղատնտեսական հաստատութիւններու՝ նոյն իսկ եթէ ասոնք իրենց սաղմնային վիճակին մէջ ներկայանան անոր առաջին անգամ, ակնատես պիտի ըլլայ մտրդոց աշխատութիւններուն ու գործերուն, պիտի ըմբռնէ անոնց կարեւորութիւնն ու նպատակը և այս կերպով օգտակար անհատ մը պիտի դառնայ հանրութեան համար :

Այս կերպով, վստահ է Յանձնաժողովս թէ մանուկը համոզմամբ պիտի սիրէ իր հայրենակիցները՝ անձնական դիտողութեամբ տեսած ըլլալով այն փոխադարձ ծառայութիւնները զորս մարդիկ կը մատուցանեն իրարու, և այն սերտ առնչու-

Թիւնը որ կը տիրէ անոնց գործերուն միջև . պիտի դիտնայ յարգել օրէնքը՝ որ իրաւունքին տէր ընելով մարդը և պարտքին կատարմանը հարկադրելով զանի, հիմնաքարը կ'ըլլայ ընկերական կեանքին . իր ասպարէզին մէջ, ինչ որ ալ ըլլայ ան, պիտի հետամտի կատարելագոյնին . իրր ազատ քաղաքացի, պիտի հետաքրքրուի աշխարհ իր հանրային կեանքով որքան իր գաշտով կամ գործատեղիով:

Նոյնպէս դիտակցութեամբ պիտի սիրէ Բնութիւնը, անոր մտերիմը պիտի դառնայ և փոխանակ կրաւորական աւանդամուտութեամբ համակերպելու անոր ընթացքին՝ միջոցը պիտի վնասէ զայն ողորդելու, թախանձելու, և ի յայտ պիտի բերէ անոր թաքուն հրապոյրներն ու գանձերը՝ իրեն և իւրայնոց վայելքին համար:

Եւ որպէս զի, մէկ կողմանէ դպրոցական սերունդին համար Բնութեան օրէնքներուն ուսումն ու Անոր ազդիւրներուն շահագործումը դիւրանայ, և միւս կողմանէ անուս հասարակութիւնն ալ՝ յայտնապէս ըմբռնելով կրթութեան բարիքները՝ սրտովին յարի դպրոցին, Յանձնաժողովս կ'առաջարկէ .

Ա. — Վարժարանաց համար կարգել երկու շրջուն ընդհանուր Տեսուչներ, մին Հայաստանի (երկու շրջանակ) և միւսը Կիլիկիոյ (երկու շրջանակ) համար, որոնց պաշտօնը պիտի ըլլայ ուս-

մանց ծրագրին գործադրութեանը հսկել իրենց պարբերական այցելութիւններով՝ համաձայն կեդրոնէն տրուելիք հրահանգաց:

Բ. — Ընկերութեան վարժարանները բաժնել շրջանակներու և իւրաքանչիւր շրջանակի համար ունենալ մէյմէկ շրջուն Գիւղատնտես Տեսուչ, որ ուղղակի պատասխանատու ըլլայ Ընդհ. Տեսչին և որուն պաշտօնը ըլլայ ոչ միայն վարժարանաց բարւոք ընթացքին ու ծրագրին գործադրութեանը հսկել իրեն տրուած մասնաւոր Հրահանգի մը համեմատ, այլ նաև գիւղատնտեսական ծանօթութեանց տարածման աշխատիլ, մէն մի վարժարանի ուսուցչին դասաւանդութիւնն հակակրճել, թերի կողմերը մատնանշել և լաւագոյն ուղղութիւնը յոյց տալ անոր: Նոյնպէս աշակերտաց կատարել տալ գիւղատնտեսական գործնական աշխատութիւններ և հասարակութեան հասկանալի լեզուաւ ժողովրդական դասեր աւանդել մշակութեանց, բերքերու բարելաւման, հիւանդութեանց կանխարգել միջոցներու և վերջապէս հողագործութեան օրըստօրէական յառաջդիմութեանց վրայ:

Գիւղատնտեսական շրջուն Տեսուչը պարտաւորել որ՝ իր պաշտօնին կիրարկութեանը համար՝ գոնէ ամիսը մէկ անգամ՝ այցելէ շրջանակին իւրաքանչիւր վարժարանը:

Արտօնութիւն ձեռք բերել որ անիկա իր

փորձերուն, դասերուն ու արդիւնաբերութեանը համար ՚ի հարկին օգտուի Շրջանակին մէջ գըտնուած վանքապատկան հողերէն:

Իսկ շատ փափաքելի պիտի ըլլար որ անոր տրամադրութեան տակ դրուէր Ագարակ մը ուր կարենար Գաւառական նոյն սահմանին բարեյարմար արդիւնաբերութիւնները կատարել գիտական մեթոտով, և ցոյց տալ զիւղացիին թէ որո՞նք են աշխատութեան արդիւնարար պայմանները:

Գ.— Պահել գիշերօթիկ Ագարակ—Դպրոց մը, եւամեայ չրջանով, համեստ սկզբնաւորութեամբ, առաջին տարեչրջանի համար 10 աշակերտով, առ այդ յատկացնելով ամէն կերպով յարմար գիրք ու բարեբեր հողեր և լաւ օդ ունեցող վանքապատկան ագարակներէն մին: Սոյն հողագործական վարժարանին ուսմանց ծրագիրը, հաստատման միանուագ ծախքը ու տարեկան պիւտճէն պատրաստուած ըլլալով՝ կը մատուցանեմք ընդ գրոյս Պատ. Ժողովոյդ:

Այս դպրոցին աշակերտները պէտք է ընտրել ընկերութեան նախակրթարանաց ընդունակ չրջանաւարտներէն, ըստ պահանջման դաւառաց:

Ագարակ—Դպրոցին չրջանաւարտներէն յարմարագոյնները կոչել ուսուցչական պաշտօնի՝ Ընկերութեան նախակրթարանաց մէջ:

Յանձնաժողովս, երբ մէկ կողմանէ Պատուարժան Ժողովոյդ կ'առաջարկէ Ագարակ—Դպրոցի

մը հաստատութիւնը իրրեւ միջոց ուսուցիչներու պատրաստութեան, բնական է որ չի կրնար անտարբեր մնալ դասադրքերու մասին որոնք՝ որքա՞ն աւելի Մանկավարժական սկզբունց համաձայն պատրաստուած ըլլան՝ ա՛յնքան աւելի օգտակար կը դառնան, նուազագոյն աշխատութեամբ առաւելագոյն արդիւնք տալով:

Իսկ դասադրքերու միջոցաւ ուսուցչին ընծայուելիք օժանդակութիւնը պիտի լրանայ Ուսմանց ծրագրին կցելի Հրահանգով որ արդէն պատրաստուած է և զոր Պատ. Ժողովոյդ տրամադրութեան տակ դնելու ուրախութիւնը պիտի ունենայ Յանձնաժողովս մօտ ժամանակէն:


Անդամք


Դիւդաճեճ . ու Նախարր . Ուսմանց Եանձնախմբի

Ստորագրութիւնք

ԳԱՆՈՒՍՏ	ՄԱԼԱԹԵԱՆ	ԳԷՈՐԳ	ԹՈՐԳՈՄԵԱՆ
ՀԱՅԿ	ԽՕՃԱՍԱՐԵԱՆ	ԼԵՒՈՆ	ԲԱՆԻԿԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ	ՀԻՆԴԼԵԱՆ	ՎԱՀԱՆ	ՍՈՒՐԵՆԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ	ՊՍՈՍԻԵԱՆ	ՀԱՅԿՍԶՆ	ՊԷԿԵԱՆ

2/15 Յուլիս 1909 Կ, Պոլիս





2013

ՀՀ Ազգային գրադարան

17370



NL0050430

157 42
C 98M-41
5990